

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ - 2020

## ՆՈՐԱՆԿԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՌԹՅԱՆ ՄԵՋ ԱՌԱՋԻՆ ԱՆՉԱՄ ԿԱՌԱՎԱՐՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՐՈՐԴ ԱՆՉԱՄ ՀԱՂԹԵՅՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԸՆՏՐԱՇԵՄՆ ԶԱՂԹԱՅԱՐԵՑԻՆ ՈՒԹ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԿ ԸՆՏՐԱԴԱՇԻՆՔ



Հոկտեմբերի 31-ին անցկացվեցին նորանկախ Վրաստանի 10-րդ գումարման խորհրդարանի ընտրությունները: Այս ընտրություններն էականորեն տարբերվեցին նախորդ ընտրություններից, քանի որ ընթացքում ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությունների համաձայն, ըստ որոնց համամասնական ընտրակարգով նախկին 100-ի փոխարեն՝ բաշխվեց 120 մանդատ, իսկ մեծամասնական համակարգով նախկին 50-ի դիմաց՝ 30 մանդատ: Բացի այդ, ընտրաշենքը նվազեցվել էր մինչև մեկ տոկոս: Ընտրություններին մասնակցեցին 48 կուսակցություններ և 2 ընտրադաշինք:

Ընտրություններում ձայների 48,23 տոկոսով հաղթեց կառավարող «Վրացական երազանք» կուսակցությունը: Բացի «երազանքից», մեկ տոկոսի ընտրաշենքը հաղթահարեցին եւս ութ ընտրական տուբյեկտներ՝ «Միասնական ազգային շարժում»-միացյալ ընդդիմությունը», որի օգտին քվեարկեց

ընտրողների 27,17 տոկոսը, «Եվրոպական Վրաստանը»՝ 3,79 տոկոսով, «Լեւոն»՝ 3,15 տոկոսով, «Հայրենասերների պլանսը»՝ 3,14 տոկոսով, «Ռազմավարությունը՝ շինարարը»՝ 3,15 տոկոսով, «Գիր-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## 30 ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՆԵՐԻՑ 16-ՈՒՄ ԿԱՆՑԿԱՑԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ

Ինչպես արդեն նշեցինք, 30 ընտրատարածքներից ընտրությունների առաջին փուլում հաղթողը բացահայտվեց միայն 14-ում, իսկ մնացած 16-ում, այդ թվում՝ Թբիլիսիի 8 ընտրատարածքներում նշանակված է ընտրությունների երկրորդ փուլը, որն անց է կացվելու նոյեմբերի 21-ին:

Այսպիսով, նոյեմբերի 21-ին Մեծամասնական համակարգով ընտրություններ կանցկացվեն Թբիլիսիի Մթածմինդա-Կրծանիսիի թիվ 1 ընտրատարածքում, որտեղ կմրցեն առաջին փուլի արդյունքներով լավագույն երկու արդյունքի հասած թեկնածուները՝ «երազանքից» Բեքա Օդիշարիան (առաջին փուլում ստացել էր ընտրողների ձայնե-

րի 44,81 տոկոսը) և «Միացյալ ընդդիմության» ներկայացուցիչ Շավլա Շավալիձեն (29,45 տոկոս), Վակեի թիվ 2 ընտրատարածքում՝ Նոդար Տուրծեւաձեն («երազանք»՝ 42,24 տոկոս) և Էլեն Խոշտարիան («Միացյալ ընդդիմություն»՝ 35,55

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ԸՆՏՐԱՇԵՄՆ ԶԱՂԹԱՅԱՐԱԾ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՈՒԹ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶՐԱԺԱՐՎՈՒՄ ԵՆ ՄԱՆԴԱՏՆԵՐԻՑ

Ինչպես արդեն նշեցինք, հոկտեմբերի 31-ին ընտրությունների արդյունքներով «Վրացական երազանքից» բացի, մեկ տոկոսի շենքը հաղթահարած «Միասնական ազգային շարժում»-միացյալ ընդդիմությունը, «Եվրոպական Վրաստանը», «Լեւոն», «Հայրենասերների պլանսը», «Ռազմավարությունը՝ շինարար», «Գիրչին», «Ալեկո Էլիսաշվիլի-Քաղաքացիները» և «Լեյբորիստական կուսակցությունը» հրաժարվում են իրենց հասանելիք պատգամավորական մանդատներից և պահանջում են ընտրությունների արդյունքների չեղարկում և նոր ընտրությունների անցկացում: Բացի այդ, ընդունված համատեղ հայտարարությունում նշված է նաեւ, որ այդ կուսակցությունները հրաժարվում են նաեւ նոյեմբերի 21-ին 16 ընտրատարածքներում անցկացվելիք մեծամասնական ընտրությունների մասնակցությունից:

ԿԸՀ-ի կողմից ընտրությունների նախնական արդյունքների հրապարակումից անմիջապես հետո, ընտրաշենքում հաղթահարած, ինչպես նաեւ արտախորհրդարանական ընդդիմության մյուս կուսակցությունները հայտարարեցին ընտրությունների արդյունքները չեղարկելու և նոր ընտրություններ անցկացնելու պահանջով բողոքի ցույցեր անցկացնելու մտադրության մասին: Նշենք, որ վերոնշյալ ութ կուսակցություններից յոթը, բացառությամբ «Հայրենասերների պլանսի», հանդես են գալիս համատեղ ծակատով, իսկ ինչ վերջինիս հայտարարությամբ գործելու է ըստ սեփական հայեցողության:

## «ԱՆԿԱՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ԴԻՔՈՐՈՇՈՒՄԻՑ, ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԿԳՈՐԾԻ»

Մեկնաբանելով խորհրդարանական ընտրությունների արդյունքում ընտրաշենքը հաղթահարած ընդդիմադիր 8 կուսակցությունների՝ խորհրդարանական մանդատից հրաժարվելու և խորհրդարան մուտք չգործելու մասին որոշումը, կոմսոխտուցիոնալիստ Վախուշտի Մեմարդեն հայտարարեց, որ անկախ ընդդիմության դիրքորոշումից, Վրաստանի խորհրդարանը կգործի:

- Թեկուզ 60 պատգամավորով, բայց Վրաստանի խորհրդարանը կկազմավորվի, դա ոչ մի հիմնախնդիր չի ներկայացնում,- հայտարարեց փորձագետը:

Վախուշտի Մեմարդեն չի կիսում ընդդիմության այն համոզմունքը, որ իրենց կհաջողվի կաթվածահարել խորհրդարանի աշխատանքը:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԳԻՐԳԻ ԳԱԽԱՐԻԱՅԻՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԶԱՂԹԱՆԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Հոկտեմբերի 31-ին Վրաստանում անցկացված խորհրդարանական ընտրություններում «Վրացական երազանքի» համոզիչ հաղթանակի առիթով Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհավորեց Վրաստանի վարչապետ Գիրգի Գախարիային:



Վրաստանի վարչապետի աշխատակազմի մանլո ծառայության տեղեկատվությամբ, երկու երկրների վարչապետերի հեռախոսազրույցում Նիկոլ Փաշինյանը հաջողություններ է մաղթել «Վրացական երազանքին»:

«Կողմերը ընդգծել են երկու երկրների բարեկամական և բարիդրացիական հարաբերությունները»,- նշված է հաղորդակցության մեջ:

«Կողմերը ընդգծել են երկու երկրների բարեկամական և բարիդրացիական հարաբերությունները»,- նշված է հաղորդակցության մեջ:

## ԱԽԱԼՔԱԼԱՔԻ-ՆԻՆՈՇՄԻՆԴԱՆ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆՈՎ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԻ ՍԱՄՎԵԼ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ...

Հոկտեմբերի 31-ին Վրաստանում անցկացված խորհրդարանական ընտրությունների վերջնական արդյունքները դեռևս հայտնի չեն, թեպետ նախնական արդյունքներից կարելի է եզրակացնել, որ համամասնական ընտրահամակարգով հաղթել է «Վրացական երազանքը»:

Նոր խորհրդարանում այդ ընտրակարգով պատգամավորներ կունենան ընդդիմադիր ութ կուսակցություններ: Ինչ վերաբերում է մեծամասնական ընտրահամակարգին, ապա 30 ընտրատարածքներից հայտնի դարձան միայն 14-ում հաղթողը, ով հավաքեց ընտրողների ձայների 50 եւ ավելի տոկոսը: Այդ ընտրատարածքների թվում էր նաեւ Ախալքալաքի-Նինոծմինդայի թիվ 18 ընտրատարածքը:



Հիշեցնենք, որ այստեղ մեծամասնականի մանդատի համար պայքարում էր ինը թեկնածու: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներով, ձայների 61,7 տոկոսով (19 017 ձայն) հաղթող է ճանաչվել «Վրացական երազանքի» թեկնածու, 9-րդ գումարման խորհրդարանի համամասնական (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ...ԻՍԿ ԶԱՄԱՄԱՍՆԱԿԱՆՈՎ՝ ՍՄԲԱՏ ԿՅՈՒՐԵՂՅԱՆԸ



Ինչպես արդեն հաղորդել ենք, համամասնական կուսակցական ցուցակում «Վրացական երազանքը» 37 համարի տակ ներառել էր Նինոծմինդայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախկին նախագահ Սմբատ Կյուրեղյանին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընտրությունների արդյունքում «Վրացական երազանքը» 48,7 տոկոս ձայներով խորհրդարանում ապահովում է համամասնական 61 պատգամավորի ներկայություն, Սմբատ Կյուրեղյանը դարձավ Վրաստանի խորհրդարանի պատգամավոր:





Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԱՌԱՋԻԿԱ ԶՈՐՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ, ՈՎ ԶԻ ՎՃԱՐԻ ԿՈՍՏԻՆԱԼ ԶԱՐԿԵՐԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հակաճգնաժամային ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում, Վրաստանի կառավարությունը որոշում է ընդունել ընթացիկ տարվա նոյեմբեր, դեկտեմբեր եւ հաջորդ տարվա հունվար եւ փետրվար ամիսների համար կոմունալ հարկերի վճարումից ազատել քաղաքացիների առանձին կատեգորիաների:



ՍԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ՍՆԿԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԿՇԱՐՈՒՆԱԿԻ

Չնայած նրան, որ կորոնավիրուսի պատճառով Թբիլիսիում մանկապարտեզները փակվեցին, միևնույն է մանկապարտեզների սաների ծնողների համար շարունակվում է սննդի բաժանումը:

Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեի խոսքով, նախորդ ամիսների օրինակով, ծնողներին հնարավորություն կընձեռվի սննդի չափաբաժինները տուն տանել:

ՄԵՏՐՈՅՈՒՄ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԶՈՒՔԸ ԿՎԵՐԱՅՍԿԻ



Համաճարակային իրավիճակից ելնելով «Վարկեթիլի», «Ախմետելի թատրոնի», «Դիդուբեի» եւ «Կայարանի իրապարակի» մետրոյի կայարաններում պիկ ժամերին, հերթի կառավարման նպատակով, սկսվել է ուղեւորահոսքի հսկողությունը:

Թբիլիսիի քաղաքապետարանը, միջգերատեսչական համակարգող խորհրդի հանձնարարականով, հատուկ միջոցառումներ է իրականացնում Թբիլիսիի մետրոյում հանրային առողջապահության անվտանգության նպատակով:

Թբիլիսիի քաղաքապետարանը կոչ է անում բնակչությանը, խստորեն հետեւել Վրաստանի կառավարության կողմից սահմանված հանձնարարականներին եւ հոգ տանել իրենց ու շրջապատի մարդկանց առողջության մասին:

ՏԱՐԱԴՐԱՄ

ԴՈՒՆԱՐԻ ԵՎ ԵՎՐՈՅԻ ՆԿԱՏԱՍԱՐ ԼԱՐԻՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՐԺԵԶՐԿՎԵԼ



Վրաստանի ազգային տարադրամի՝ լարիի արժեզրկումը ԱՄՆ դոլարի եւ եվրոյի նկատմամբ շարունակվում է: Նոյեմբերի 5-ի դրությամբ, կոմերցիոն բանկերում առաջին անգամ մեկ եվրոյի արժեքը մոտեցավ 4 լարիի շեմին, պաշտոնական փոխարժեքը՝ 3,92 լարի, իսկ դոլարի նկատմամբ՝ 3,4-ի բնագծին:

տեմբեր-հոկտեմբեր ամիսներին Ազգային բանկը վաճառել էր 320 միլիոն դոլար, իսկ տարեսկզբից արտարժույթի պահուստներից 709 մլն դոլար փոխանակվել է լարիի հետ:

Լարիի փոխարժեքը եակամորեն արժեզրկվել է կորոնավիրուսային համավարակի ժամանակ: Սա հետեւանքն էր սահմանների փակման, օտարերկրյա զբոսաշրջիկների ներհոսքի գրեթե ամբողջական դադարեցման եւ կարանտինի ընթացքում տնտեսական գործունեության դադարեցման:

Հիշեցնենք, որ կորոնավիրուսի առաջին դեպքը Վրաստանում գրանցվել էր փետրվարի 26-ին: Դրանից մի քանի օր առաջ՝ 2020 թվականի փետրվարի 23-ին, 1 եվրոն արժեք 3,0571 լարի, իսկ 1 դոլարը՝ 2,82999 լարի: Ութ ամսվա ընթացքում լարին դոլարի նկատմամբ ընկել է 51, իսկ եվրոյի նկատմամբ՝ 84 թեթրիով: Համավարակի տարածումը կանխելու նպատակով՝ կառավարության կողմից ներդրվեցին սահմանափակումներ, երկրի տարածքում հայտարարվեց կարանտինային պայմանակարգ, երկրի սահմանները փակվեցին, ուղեւորաշվերթերը կանգնեցվեցին:

Մասնագետները նշում են, որ կոմերցիոն բանկերում լարիի անկման հետ կապված իրավիճակը ցույց է տալիս շուկայի սպասելիքները, որոնք, ամենայն հավանականությամբ, կազդեն պաշտոնական փոխարժեքի վրա, այդ թվում՝ նաեւ այլ արժույթների հետ կապված:

Հիշեցնենք, որ նոյեմբերի 2-ին Վրաստանի ազգային բանկը վաճառել էր 60 միլիոն դոլար երկրի արտարժույթի պահուստներից: Չեռնարկելով լարիի կայունացման միջոցառումներ՝ միայն սեպ-

**ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՅՏՆԱԲԵՐԿԵԼ Է ԶՀԱՅՏԱԳՐՎԱԾ ԳՈՒՄԱՐ**

Ապօրինի եկամտի օրինականացման կանխման նպատակով, Վրաստանի մաքսային տարածքում կանխիկ գումարի եւ արժեքավոր բանեւորման ներքերման-դուրսբերման գործընթացը ենթակա է ֆինանսների նախարարության եկամտների ծառայության կողմից խիստ մաքսային վերահսկողության:

«Օդանավակայան» ձեւակերպման տնտեսական գոտում փոստային փոխանցումների մաքսային վերահսկողության վարչության մաքսային աշխատակիցների կողմից, Վրաստանի քաղաքացի Ա.Ն.-ին պատկանող փոստային փոխանցման ստուգման արդյունքում հայտնաբերվեց չհայտագրված գումար ԱՄՆ 51 000 դոլարի (16495,9 լարի) չափով: Մաքսային օրենսգրքի 169 հոդվածի 3-րդ մասի համաձայն, օրինախախտում թույլ տված անձին սահմանվեց դրամական տուգանք չհայտագրված գումարի 10 տոկոսի չափով՝ 16495,95 լարի:

ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ՆԵՐԿՐՈՒՄՆԵՐԸ՝ ԽԻՍՏ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈՒ



Միջազգային բեռնափոխադրումներ իրականացնող բեռնատար տրանսպորտի երթուղիները չհայտագրված վառելանյութի ներկրման հարցով ենթակա է մաքսային խիստ վերահսկողության:

Մաքսային աշխատակիցների կողմից, «Կարմիր կամուրջ» սահմանային անցակետում, կասկածի հիման վրա, խուզարկության ենթարկվեցին Ադրբեջանից մուտք գործող բեռնատար ավտոմեքենաները: Վերջին մեկ ամսվա տվյալներով, կանխվել է 16730 լիտր չհայտագրված դիզելային վառելանյութի ներկրման փաստը: Չհայտագրված վառելանյութի ներկրումը հիմնականում իրականացվում է բեռնատար ավտոմեքենաների վարորդների կողմից տնայնագործական մեթոդով պատրաստած տարողությունների միջոցով:

Վրաստանի մաքսային օրենսգրքի 168 հոդվածի համաձայն, վերոնշյալ փաստը իրենից ներկայացնում է իրավախախտում եւ որպես պատժամիջոց նախատեսվում է դրամական տուգանք:

ԿԱՆԽԿԵՑ ԹՄՐԱՆՅՈՒԹ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԴԵՂՈՐԱՅՔԻ ԱՊՕՐԻՆԻ ՆԵՐԿՐՈՒՄԸ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամտների ծառայության մաքսային անցումակետերում եւ տնտեսական ձեւակերպման գոտիներում կրկին խստացվել են վերահսկողության ընթացակարգերը, ինչպես միջազգային բեռնափոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային միջոցների վարորդների, այնպես էլ պետական սահմանով փոխադրվող ապրանքի եւ երկիր փոխանցվող միջազգային փոստային փոխադրումների հարցում:

Վերոնշյալ վերահսկողության շրջանակներում ֆինանսների նախարարության եկամտների ծառայության աշխատակիցները «Օդանավակայան» տնտեսական ձեւակերպման փուլում կանխեցին երկրի տարածք թմրանյութ պարունակող դեղորայքի ապօրինի ներկրման փաստը: Մաքսային աշխատակիցները փոստային փոխադրումների մաքսային վերահսկողության ընթացակարգերի իրականացմանը կանխեցին թմրանյութ պարունակող դեղորայքի (ընդհանուր 137 գրամ 217 եւ 10 թիթեղ) ապօրինի ներկրումը:

Գործի նյութերն արձագանքման համար ուղարկվել են ներքին գործերի նախարարության համապատասխան ծառայությանը:

